ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՈՐ ՔԱՐՈԶԳԻՐՔԸ

«Մարող շրթունքին շնորհաստեղծ նուաճումներում փրկութիւնն է գիրքը՝ մարդէն ետք, մարդու կեանքը երկրի վրայ առկայացնող եւ ներշնչական աղբիւրի վերածող»:

ԳԱՐԵԳԻՆ Ա

Գարեգին Ա երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետի «մարած շրթունքի շնորհաստեղծ նվաճումները» հավատավոր հայ ընթերցողին ներկայացվեցին «Հայրենիքը պատկերն է հայության» նոր քարոզգրքով:

Երանաշնորհ Վեհափառի կյանքը երկրի վրա առկայացավ Մայր Հայրենիքին ու Եկեղեցուն մատուցված բազում-բազում նվիրագործություններով ու «ներշնչական աղբյուրի վերածված» մեծաթիվ գրքերով, հրապարակումներով, օրհնության գրերով, ելույթներով ու քարոզներով:

«Հայրենիքը պատկերն է հայության» ստվարածավալ ժողովածուն, որ լույս է տեսել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ և հովանավորությամբ, արժանի նվեր է երանաշնորհ Գարեգին Ա Վեհափառի մահվան տարելիցի կապակցությամբ:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի մահից հետո նրա գրական ժառանգության ամբողջականացումը անհրաժեշտ և հրատապ խնդիր դարձավ, որը կարևորվեց ոչ միայն Վեհափառի հիշատակը հավերժացնելու, այլև ընդհանրապես հոգեվոր-եկեղեցական գրականության, քրիստոնեության պատմության, ինչպես նաև հայոց լեզվի զարգացման համար:

Հայ ընթերցողին մինչև օրս առանձին գրքերով ներկայացված էին Վեհափառ Հայրապետի՝ Կիլիկյան գահակալության շրջանին վերաբերող նյութերը: Էջմիածնական շրջանը ցավալիորեն թեև կարճ, սակայն արդյունավետ ու բեղուն եղավ, և

այդ տարիներին հնչած քարոզախոսությունները, դասախոսությունները, ելույթները և այլն ուսանելի և հոգեհարազատ են և մեզ տոգորում են քրիստոնեական սիրով ու հավատքով: Դրանց հանրագումարային հրատարակությունը հարկավ արդիական և անհրաժեշտ էր:

Այս կարևորագույն աշխատանքին է ձեռնամուխ եղել Մայր Աթոռի միաբան, երանաշնորհ Հայրապետի գավազանակիր, հոգեշնորհ Տեր Արտակ վարդապետ Տիգրանյանը: Ինչպես վկայված է գրքում, Հոգեշնորհ Հայր Սուրբը, ի նշան երախտագիտության, ծրագրել է լույս ընծայել Վեհափառ Հայրապետի էջմիածնական գահակալության շրջանին վերաբերող մի եռապատում:

Հոգևոր եռապատումի առաջին գիրքը՝ «Հայրենիքը պատկերն է հայության», իր մեջ ամփոփում է Մայր Տաճարի և Հայաստանյայց Եկեղեցու Հայաստանի և սփյուռքի թեմերի եկեղեցիների բեմերից հնչած քարոզները: Այդ ժողովածուն երախտիքի ծնունդ է, որին պիտի հաջորդի ևս երկու հատոր: Մեկում կամփոփվի էջմիածնական շրջանի մնացյալ բանավոր խոսքը՝ շաբաթօրյա քարոզախոսություններ Մայր Տաճարում, դասախոսություններ, ռադիոհեռուստատեսային ելույթներ և այլն, մյուսում՝ ողջ հայրապետական գործունեությանը վերաբերող գրավոր գործերը՝ սկսյալ անդրանիկ հայրապետական կոնդակից մինչև տարբեր կոնդակներ և օրհնության գրեր, հոգևոր-կրոնական մտածումներ, ազգային-եկեղեցական նշանակալից իրադարձությունների առթած խոսքեր: Այդպիսով կամբողջանա Մեծի

Տաճն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ընդհանրական հայրապետական շրջանի հոգևոր-գրական ժառանգությունը:

Գրքի առաջաբանում, որը կրում է «Կյանքի վերջին հանգրվանը» խորագիրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն բարձր գնահատանքի է արժանացնում Վեհափառ Հայրապետի կաթողիկոսական տարիների նվիրագործությունը և շատ կարևորում նման ժողովածուի լույսընծայումը: Իր գնահատանքն ու օրհնությունը հղելով գիրքը հրատարակության պատրաստողներին (կազմող՝ Արտակ վարդապետ Տիգրանյան, խմբագիրներ՝ Մարիամ Վարդանյան, Վարդան Դևրիկյան)՝ Վեհափառ Հայրապետը գրում է. «Հավատում ենք, որ գիրքը ընթերցողներին համակելու է էջմիածնապաշտության ու հայրենապաշտության ոգով՝ քարոզխոսության ուսանելի այս հատորը դարձնելով նաև սեղանի կարևոր գրքերից մեկը մերօրյա հոգևորական նոր սերնդի, որի պատրաստմանը Մայր Աթոռում նույնպես իմացական իր ողջ կյանքը անմնացորդ նվիրեց ուսուցիչ, քարոզիչ և հրատարակիչ, Մեծի Տաճն Կիլիկիո Գարեգին Բ և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը...»:

Առաջաբանին հաջորդում է «Կազմողներից» վերտառությամբ գրությունը, ուր որոշակի տեղեկություն է հաղորդվում գրքում ամփոփված նյութերի, դրանց ընդհանուր բովանդակության և ուղղվածության մասին:

Ընդհանուր շարադրանքը բաժանված է ենթաբաժինների:

Գրքի առաջին բաժնում զետեղված են կաթողիկոսական ընտրությանը և գահակալության հանդիսությանը վերաբերող ելույթները: Դրանց հաջորդում են Մայր Տաճարում և Հայաստանի այլ եկեղեցիներում հնչած քարոզխոսությունները:

Գիրքն ավարտվում է «Դուք մնաք զօրաւոր» խորագիրը կրող բաժնով, որում ամփոփված է Վեհափառ Հայրապետի վերջին երկու քարոզը, որոնք կարդացվել են Մայր Աթոռում Վեհափառի՝ արտասահմանյան բուժումներից վերադառնալու առիթով և Նորավանքի բացման հանդիսության կապակցությամբ:

Վեհափառի մարող շրթունքի և դողդողացող ձեռքի վերջին ճիգը քաջալերանք ու սիրո քարոզություն է, որով նա հորդորում է իր միաբան զավակներին սիրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, շեն պահել նրա կրոնական ու ազգային ծառայությունը:

Գրքասեր, հրատարակիչ, եկեղեցասեր ու ազգասեր Վեհափառի պատգամը կիրականանա Մայր Աթոռի բարեզարդմանը նվիրված աշխատանքներով, քրիստոնեական հավատքի զորեղացումով, 1700-ամյա Քրիստոնեական Հայաստանը նորանոր ձեռքբերումներով շենացնելով, ինչպես և քրիստոնեական ոգով արարված գրքերի աշխարհ գալով:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ